| | | | |
|---|---|---|---|
| Համարը | N 1080-Ն | Տեսակը | Հիմնական |
| Տիպը | Որոշում | Կարգավիճակը | Գործում է |
| Սկզբնաղբյուրը | ՀՀՊՏ 2014.10.15/55(1068) Հոդ.912 | Ընդունման վայրը | Երևան |
| Ընդունող մարմինը | ՀՀ կառավարություն | Ընդունման ամսաթիվը | 02.10.2014 |
| Ստորագրող մարմինը | ՀՀ վարչապետ | Ստորագրման ամսաթիվը | 07.10.2014 |
| Վավերացնող մարմինը | | Վավերացման ամսաթիվը | |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվը | 16.10.2014 | Ուժը կորցնելու ամսաթիվը | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ) ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ու Մ

2 հոկտեմբերի 2014 թվականի N 1080-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ) ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2014 թվականի հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝

| | հազ. հեկտար, | որից՝ ոռոգվող |
|---|---|---|
| Հայաստանի Հանրապետության տարածքը՝ | 2974.3 | 208.1 |
| այդ թվում ՝ | | |
| 1) Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության՝ | | |
| ա. գյուղատնտեսական նշանակության հողեր | 2049.4 | 154.6 |
| որից՝ | | |
| վարելահողեր | 447.5 | 120.1 |
| բազմամյա տնկարկներ | 33.7 | 33.0 |
| խոտհարքներ | 121.7 | 1.5 |
| արոտներ | 1054.2 | |
| այլ հողատեսքեր | 392.3 | |
| բ. բնակավայրերի հողեր | 151.8 | 53.1 |

| | | |
|---|---|---|
| որից` տնամերձ և այգեգործական | | |
| (ամառանոցային) հողեր | 94.5 | 52.9 |
| գ. արդյունաբերության, ընդերքօգտագործման | | |
| և այլ արտադրական նշանակության հողեր | 36.4 | |
| դ. էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ | | |
| ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | 12.6 | |
| ե. հատուկ պահպանվող տարածքների հողեր | 331.7 | |
| զ. հատուկ նշանակության հողեր | 31.6 | |
| է. անտառային հողեր | 334.3 | 0.4 |
| ը. ջրային հողեր | 25.9 | |
| թ. պահուստային հողեր | 0.6 | |
| 2) հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների | | |
| ա. քաղաքացիների | 537.5 | 181.0 |
| բ. իրավաբանական անձանց | 29.1 | 2.7 |
| գ. համայնքային | 1036.5 | 22.7 |
| դ. պետական | 1370.5 | 1.6 |
| ե. օտարերկրյա պետությունների, միջազգային | | |
| կազմակերպությունների | 0.7 | 0.1 |

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո` Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին` իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում կատարվող փոփոխությունները (բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզպետներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե` հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո` Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին` անտառաշինական ծրագրերի իրականացման ժամանակ հայտնաբերված հողային ֆոնդի բաշխման անճշտությունները, անտառային հողերի սահմաններն ու տարածքները ճշգրտելուց հետո, և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին` ազգային պարկերի, արգելոցների, արգելավայրերի սահմաններն ու տարածքները կառավարման պլաններին համապատասխան ճշգրտելուց հետո` համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության մարզպետների, համայնքների ղեկավարների հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե` ընթացիկ հողային հաշվեկշռում ընդգրկելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2014 թ. հոկտեմբերի 7
Երևան